*Մարտիրոս որդոյ Սարգսի·* } Օ

*Մովսէս որդոյ Յոնանու·* } Օ

Օրինակ թղթոյ կտակի ննջեցելոց։

## ԳԼՈՒԽ Ղ.

*Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։*

*Կտակ յետ մահուան հաստատուն է որպէս հրամայէ Սրբազան առաքեալն Պօղոս, արդ այժմ ես Ստեփաննոս որդոյ Սիմէօնի գեղջէն մանագկերտու ազգաւ հայ մկրտեալ և հաւատացեալ 'ի Քրիստոս իմ կամաւն և իմ յօժարութեամբն և ամենայն զգայարանօք առողջ կտակս արարի առաջի Աստուծոյ և մարդկան որ յետ մահուան իմոյ հաստատուն լինիցի այսինքն։*

*Նախ ինձ կտակակատար կարգեցի երէց որդին իմ զաքարիայ և եղբայրն իմ նաւասարդ, և յատկապէս բարեկամն իմ միքայէլ որդի պետրոսի որ սոքայ միաբան ինձ կտակակատար լինիցեն մինչև զոր ինչ 'ի յայսմ կտակիս յիշեցեալ կատար հաստուցանիցեն, Երկրորդ զամենայն զոր ինչ ստացուածք իմ 'ի յերեսս երկրի եթէ 'ի աշխատանաց իմոց, և եթէ 'ի նախնեաց իմոց ինձ մնացեալ բոլորն հաւաքեն վաճառելոյն վաճառեն, պահելոյն գին դնեն զոր ինչ և որքան*